ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 31-ը մայիսի 2018թ.
ժամը 11[30]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման հանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 6.1) և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (Հավելված 6) և ապրանքների տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ նեքոհիշյալ դեպքերի.

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի ներքոհիշյալ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- ընթացակարգի հրավերի 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հստակ սահմանված էր, որ նշված ապրանքատեսակների փաթեթավորումը պետք է լինի ***պլաստիկե պարկերով***, սակայն մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1) տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով սահմանված պահանջը:
- մասնակցի կողմից 11-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է ***«բետտա-ճառագայթներով ստերիլիզացիայի սերտիֆիկացում»,*** այնինչ ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ պետք է լինի ***«գամմա-ճառագայթներով ստերիլիզացիայի սերտիֆիկացում»:***
- ընթացակարգի հարվերի տեխնիկական բնութագրով 91-րդ, 92-րդ և 93-րդ չափաբաժինների մասով հստակ նշված է թեստերի քանակ, սակայն «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում թեստերի առաջարկվող քանակաների հետ օգտագործվել է ***«մոտ»*** արտահայտությունը, անհրաժեշտ է շտկել նշված անհամապատասխանությունը և վերը նշված չափաբաժինների մասով նշել թեստերի հստակ քանակներ բացառելով ***«մոտ»*** արտահայտությունը:
- սույն ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել նաև **104-րդ** չափաբաժնի մասով: 18.05.2018թ. պատշաճ ծանուցվել է մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, սակայն նշված չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիր չի ներկայացրել. անհրաժեշտ է վերը նշված չափաբաժնի մասով ընթացակարգի հրավերի Հավելված 6.1-ով (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) սահմանված ձևաչափով ներկայացնել պահանջվող տեղեկությունները:

- **«Դելտա» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես. ընթացակարգի հրավերի 5-րդ չափաբաժնի մասով հստակ սահմանված էր, որ նշված ապրանքատեսակի փաթեթավորումը պետք է լինի ***պլաստիկե պարկերով***, սակայն մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1) տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով սահմանված պահանջը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Ն. Հարությունյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Ն. Արշակյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը հունիսի 2018թ.
ժամը 12^{30}

Քանի որ հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը բացակայում էր, հանձնաժողովի նիստը նախագահեց՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյանը,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի և «Դելտա» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի և «Դելտա» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

1.1 Քննարկելով «Դելատ» ՍՊԸ-ի և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ մասնագիտական ուսումնասիրություն, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և աշխատանքները շարունակել համապատասխան մասնագիտական եզրակացություն ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

18.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ և պատասխանատու ստորաբաժանման կողմից 14.06.2018թ ելք 19/1010 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը, որոշեց **«Դելտա» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատվել բավարար՝ գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.2 Քննարկելով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովն դրանք գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ դեպքի.

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ից կողմից, որպես շտկում ներկայացած փաստաթղթերում բացակայում էին 104-րդ չափաբաժնի մասով պահանջված հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց 104-րդ չափաբաժնի մասով **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի** հայտը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Հանձնաժողովը որոշեց **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի** տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.3 Հանձնաժողովը որոշեց 104-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.4 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացված որակավորման փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին**

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Հ. Ավետիսյան
Գնահատող		Ն. Հարությունյան
Գնահատող		Ս. Նիկոլյան
Գնահատող		Ն. Արշակյան
Գնումները համակարգող՝		Ա. Մաղաքյան

18.06.18թ.